

մի *հրորդ*, ոմիւ չանուանեցի սա, դա, *նայի* չգործա-
ծութիւնը մեր քարգմանիչների կողմից:

«Դուք բոլորդ յիմար եք» — պէ՛տ է ասել՝ *ամենի* յիմար եք: Շա՛ս
անգամ իմաստի նրբութիւնը պահանջում է որոշել
հատման՝ *անջատման*ից:

«Դու գիտես, որ ես բոլորի վրայ նայում եմ մասերի արանքներով»:
— Այստեղ էլ պէ՛տ է նոյն պատճառով ասուի՝ *ամեն*
քանի վրայ կամ *նորա արարների* վրայ:

(Կը շարունակուի):

Ս. Ս.

Յ Ա Ի Ե Լ Ո Ւ Ա Մ

«ԳԻՐՔ ԹՂԹՈՑ»-Ի ՓԱԿԱՍՆԵՐԸ

ԵՒ

ՆՐԱՆԻՑ ԴՈՒՐՍ ՄՆԱՑԱՄ ԹՂԹԵՐ.

Անցեալ տարի Տփլիսում լոյս տեսաւ «Գիրք Թղթոց»
անունով յայտնի մի ժողովածու, որ ինչպէս նկատել է Արթ.
Խաչիկ վարդապետը (Արարատ 1896 թ. 23 էր.) ըստ Օրբե-
լեանի առութեան, ժողովել է տուել Անանիա Մոկացին,
հակառակ «Գիրք Թղթոց»-ի յառաջարանում արած այն
ենթադրութեան, թէ Սանեցին պիտ ժողոված լինի առա-
ջին անգամ: Այս հրատարակութիւնը, ինչպէս նրա յա-
ռաջարանում էլ ասուած է, պարզապէս ընդօրինակութիւն
է Անտոնեան միարանութեան մի յայտնի հին զբաղմունքի, որ
որքան և ընտիր, բայց և ունի թերութիւններ՝ պակաս
բաւեր, ընկած թերթեր և այլն: Հարկաւ շատ պիտի ցա-
ւէինք, որ այդպիսի մի ընտիր պատմական աղբիւր թե-
րատ է հասել մեզ, եթէ բարեբախտաբար այդ պակասը
լրացնել կարելի չլինէր Մայր Աթոռի ձեռագրաւանից: Այս-
տեղ, բացի զանազան ձեռագիրներում ցրուած թղթերից,

դանում ենք նաև երկու թղթոց ժողովածու, որոնցից մեկը՝ (Գեորգեան ցուցակով 58 համար, որ մենք Բ. ենք նշանակել) նոյն «Գիրք թղթոց» անունն էլ կրում է։* Այս ձեռագիրները վաղուց ծանօթ են եղել Արժ. Խաչիկ և Կարապետ վարդապետներին և Շնորհ. Մխարանին, որոնք և մի շարք հրատարակութիւններ են արել նրանցից։ Հետաքրքրական են Շնորհ. Մխարանի Արարատ 1897 թ. 95 եր. այդ ձեռագիրների մասին արած մանրամասն դիտողութիւնները,** ուր նա ի միջի այլ ձիշտ նկատողութիւնների և այն սխալ հետեւութիւնն է անում, որ 58 համար ձեռագիրը «գրուած է Պօլսում» և ոչ Էջմիածնում։ 1765—1767 թ., և որ այս ձեռագրից օգտուողները... կարծում են, թէ ընդօրինակութիւնն եղած է Էջմիածնում։ Սակայն բացի այն, որ 58 համարի յիշատակարաններից մէկում 1 ձ եր. պարզապէս ասուած է. «Օրինակեցաւ ի Ս. Էջմիածին», գտնում ենք երկու ուրիշ ձեռագիր (Գեորգ. ցուց. 537 և 538), որոնք աւելի պարզում են այս խնդիրը։ 538-ը՝ Գեորգ վարդապետի մեկնութիւն Եսայեայ, հետեւեալ յիշատակարանն ունի. «Փառք պատիւ պաշտօնի գոհութիւն և երկրպագութիւն անեղին... ուստի և յառաջացան մեզ ընդ իշխանութեամբ ձեռին հօռին լինիլ ձեռնաւութեամբ բաղձանաց և սիրոյ լուսաւոր մեկնութեան սրբազան մարգարէին Եսայեայ, որ գոյով ունող նոյնին սակաւ մի յառաջ մինչև ի յութ տեարն և վասն մնացելոցն տենչայի միշտ ունիլ և ոչ բաւէր կարն իմ հասու լինիլ այնմ։ Ապա զկնի ի ժամանակա քառերորդի ծայրագոյն քահանայապետի և փոխանորդի սրբոց առաքելոցն մերոց Թադէոսի և Բարդուղիմէոսի և սրբոյ հօրն մերոյ Գրիգորի Լուսաւորչին՝ Տեառն Սիմէոնի սրբազան կաթողիկոսի առ դրանն մեծի քաւարանի, այս է մօրս ամենայն եկեղեցեաց Սրբոյս Էջմիածնի, բաշխմամբ խնդրողացս ի ձիրս նախկնոյ և պարզ միակին ստացայ և զմնացեալսն՝ յիններորդ

* Ձեռագրի սկզբի ցանկում 2 եր. ասուած է. Ցանկ «Թըղթոց գրոցն է։

** Այստեղից և ծանօթանալ կարող են ցանկացողները այս ձեռագիրներէ հետ, ինչպէս և Արարատ 1896 թ. 23 եր.

տետրէն սկսեալ մինչև ի վերջն, ձեռնառութեամբ զրեցման ու մեմն Խաչատուրյ զգոնամիտ և զործնական վարդապետի կոստանդնուպոլսեցւոյ ի վայելումն ուսումնասէր և սրբասուն մանկանց անարատ հարսինս Քրիստոսի և ի յիշատակ մեղսներկ անձին վեհեցդ ծառայի Մինասայ, ըստ ներքնոյն և արտաքնովն սեւաղեցի, յամի կենարարին 1767, և ըստ Հայոց ՌՄԺԶ, յուլիս ամսոյ Ը, և Երեւում է ուրեմն, որ Խաչատուր վարդապետը Էջմիածնում է եղել և Մինաս վարդապետի համար գրել է 8 տետրից մինչև վերջը, Իբօք այդ ձեռագրի գիրը սկսած 8 տետրից փոխուում է, և ով ծանօթ է Խաչատուր վարդապետի գրին, անմիջապէս կնկաւ, որ այդ մասը Խաչատուր վարդապետի ձեռքի գործ է։ Աւելի զօրեղ փաստ է 537 համարը, որ ամբողջապէս Խաչատուր վարդապետն է գրել։ Սրա սկիզբը Դօշ Մխիթարի Երեմիա մարգարէի մեկնութիւնն է. ապա գալիս է Եղեկիէլի մեկնութիւնը, որի սկզբում կարդում ենք. «Գիրքս այս մեկնութեան մարգարէին Եղեկիէլի արարեալ մեծի վարդապետին Եսայեայ, որ էր ի Նիճ զաւառէն և էր վարժապետ մեծի Յօհաննու Որոտնեցոյն ի թուին Հայոց Խօթն հարիւր յիսուս և երկուց։ Եւ այժմ օրինակն առ մեզ հասեալ ի Ս. Էջմիածին ի հայրապետութեան Սիմէօնի սրբազան կաթողիկոսի ամենայն Հայոց ՌՄԺԶ թուոյ Սգոստոս ա. Խաչատուր գրիչս Պօլսեցի իբր վարդապետիս»։

Վերջի յիշատակարանն է. «Շնորհիւ ամենասուրբ Երրորդութեան աւարտեցաւ մեկնութեան գիրքս Եղեկիէլի ի հայրապետութեան Սիմէօնի սրբազան կաթողիկոսի ամենայն Հայոց, ի վայելումն Ս. Էջմիածնի միաբան Պօլսեցի Խաչատուր վարդապետին. ՌՄԺԶ թուին, մայիս է, և ուրեմն, որ Խաչատուր վարդապետը Էջմիածնում է եղել և նոյն իսկ միաբան, ուրեմն և նրա արտագրութիւնները այստեղ եղած պիտ լինին։ Իսկ թէ ընչից է ընդօրինակել 58 համարը և ո՞ւր է գտնուում հնագոյն օրինակը՝ գուցէ կնթաղրել կարելի է, թէ Սիմէօն կաթողիկոսի Հերակլէն ռաբիւլաթը* (տես Արարատ 1897 թ. 96 եր) հէնց այդ հնա-

* Բացի վերոյիշեալ 2 ձեռագրից նոյն Խաչատուր վարդապետը

գոյն օրինակն էր. մանաւանդ հաւանական է, որ նա հինը ուղարկէր, որպէս զի առիթ չտար կարծելու, թէ կեղծած է. որովհետեւ նա ուզում էր ցոյց տալ, թէ Լուսաւորչից սկսած Աղուանից կաթուղիկոսները ենթարկուել են Հայոց Աթոռին:

Ինչպէս յիշեցինք Անտոնեան միաբանութեան ձեռագիրը ունի պակաս տեղեր, որ են՝ Ա. 211 եր. ընկած 2 թերթ. պակասում են Վրթանիսի Աղուանից թղթի պատասխանի վերջը և Կոմիտաս կաթուղիկոսի ի Պարսս թղթի սկիզբը: Բ. 242 եր. ընկած 1 թերթ. պակասում են Կելեստինոս պապի թղթի վերջը և Պետրոսի առ Ակակ գրած Ա. թղթի սկիզբը: Գ. 453 եր. պատռւած է թերթի կէսը Սահակ կաթուղիկոսի ընդդէմ Նեստորականաց թղթի մէջ: Գ. 483 եր. ընկած է 1 թերթ. պակասում է Կոմիտաս կաթուղիկոսի և պատրիարքի զրուցաարութեան սկիզբը: Եւ Ե. ընկած է վերջից ընդօրինակողի յիշատակարանի վերջը: Այստեղ պէտք է աւելացնել և Կիւրիոնի առ Արքահամ Գ. թղթի պակասները,* ուր թէև թերթ չէ, ընկած, բայց միաքը անկաղ է դալիս, մինչդեռ նոյն այդ թուղթը աւելի հարապատ է պահուած 58 և 100 օրինակներում: Վերոյիշեալ պակասներից՝ Վրթանիսի և Կոմիտաս կաթուղիկոսի թղթերը Արժ. Կարապետ վարդապետը տակել է ամբողջու-

պետը դարձեալ Էջմիածնում արտագրել է Կարինեան Յուց. 1236 ձեռագիրը, որի սկզբում կարգում ենք. «Դիրք մեկնութեանց սրբոյ մարգարէին Եսայեայ, արարեալ աշխատասիրութեամբ սրբոյ և մեծի վարդապետին Հայոց Գէորգայ, հրամանաւ թագաւորին Հայոց Հեթմոյ, ի փառս Աստուծոյ և յօգուտ մանկանց եկեղեցւոյ:—Արտագրեալ և օրինակեալ ի ստոյգ օրինակաց ձեռամբ Խաչատրոյ վարդապետի Կ. Պօլսեցւոյ, ի հայրապետութեան լուսահեղոյս դահոյն և մօր մերոյ սրբոյ Էջմիածնի Տեառն Սիմէօնի սրբազան կաթուղիկոսի, ի վայելումն սոյնոյ սրբազան եպիսկոպոսի Սանահնեցւոյ և Արղութեան, ի թուականութեանս Հայոց ՌՄԻԲ և ի մուան Գունվարի, ի դեղաղարդ և ի լուսանկար սուրբ Աթոռս Էջմիածին»։ Մեկնութեան վերջը դանում ենք. «Կ. Պօլսեցի ապրիկար գծող դրոյս Խաչատուր վարդապետս յիշեցէք ի Քրիստոս»։

* Այս թուղթը կայ Ուխտանէսի մէջ, բայց խիստ թերատ, և այն էլ միայն սկզբի մասերը:

Թեամբ 1896 թ. Արարատում, (477 և 531 եր.) որտեղից և հետաքրքրուողները լրացնել կարող են. իսկ միւսններից կելեստինոսի Թղթի վերջը, Պետրոսի Թղթի սկիզբը, Կոմիտաս կաթուղիկոսի և պատրիարքի զբուցատրութեան սկիզբը և Կիւրիոսի Թղթի բաց թողած տեղերը կբերենք ցածը, որով և կստանանք «Թղթոց գիրքը», մասաւորապէս ամբողջացած:

Գալով Մայր Աթոռի ձեռագրատան «Թղթոց Գիրք» ժողովածուներին, պէտք է ասել, որ մի շարք Թղթեր բոլորովին պակասում են այստեղ, մինչդեռ զրա փոխարէն ունին ուրիշները, որ խիստ հետաքրքրական են և տպուածում չկան:

Այդ աւելորդները հետեւեալներն են.

Ա. Թուխտ Մխիթար վարդապետին, որ Գօշն կոչւիւր.*
 $100_{465/B} - 80a = 58_{465a} - 476B.$

Բ. Յովհաննու իմաստասիրի Հայոց կաթուղիկոսի խոստովանութիւն անշարժ յուսոյ մարմնանալոյ Բանին Քրիստոսի և ընդդէմ դաւանողաց զմի Քրիստոս յերկուս բնութիւնս.**
 $100/80a - 86a = 58/444a - 448B.$

Գ. Կարգ և Թիւ Հայրապետացն Հայոց, եթէ ոյք զկնի որոց կալան զաթոռ առաքելական Թաղէոսի և Բարդուղիմէոսի.***
 $100/86a - 87B.$

Դ. Շարից Հայրապետացն Հայոց յայտարարութիւնք երանելոյն Յովհաննիսի կաթուղիկոսի Հայոց, որ և զարձալ Մաշեալ յորջորջի, եթէ ոյք էին կամ ուստի և քանի ժամանակս կալան զաթոռ Ա. առաքելոյն Թաղէոսի. $100/87B - 89B.$

Ե. Թուղթ երանելոյն Մաշաոցի նախ քան զկաթուղիկոսութիւնն առ Տէր Գէորգ Հայոց կաթուղիկոս վասն Սիւնեաց խաչին, թէ է՞ր աղաղաւ տուաւ. $100/444a - 442B = 58/194B - 496a.$

* Այս թուղթը հրատարակել է Արժ. Կարապետ վարդապետը, Արարատ 1900 թ.

** Այս էլ հրատարակել է Արժ. Կ. վ. 1896 թ. Արարատ 192—199 եր.

*** Այս և հետեւեալ կաթուղիկոսների ցանկը կցուած են Սամուէլ Անեցու ս. էջմիածնում տպուած Ժամանակագրութեան հետ:

2. Վրդանիսի քերթողի յաղագս ընդդիմամարտից կենսարեւ լուսոյն. $100/_{442}B - 443B = 58/_{492}B - 494B$.

Է. Յամի Ի-ըղի Է-ըղի Ապրուէղ Խոսրովու արքայից արքայի, որդւոյ Ումիդի, Մարմարութա և Պետրոս եպիսկոպոս ի կողմանս Ասորեստանի հասին ի մայրաքաղաքն Հայոց ի Գուին յաղագս Կոմիտասու Հայոց կաթուղիկոսի, յորոց և ընտրեալ զգիրս ուղղափառ հաւատոյ, որոյ պատճէնն է. * $100/_{449}a - 449B = 58/_{498}a - 498B$.

Ը. Սկիպրն պատմութեան Աղուանից, որով պարծինն. Սրբոյն Վաչէի ի Գիւտայ եպիսկոպոսէ լի երկնաւոր շնորհօքն Աստուծոյ ողջոյն. $100/_{449}B - 420a = 58/_{498}B - 499a$.

Թ. Այլ ի նոյն գրոց Տեառն Վիրոյի՝ Աղուանից կաթուղիկոսի, յառաջաբան պատմութեան աշխարհին Աղուանից, կանոնք և սահմանադրութիւնք ժողովոյն Աղուանից, որ եղև ի ժամանակս Նզիայի Հայոց կաթուղիկոսի, որ էր ակթոռակալ ի սրբոյն Գրիգորէ. $100/_{420}a - 420B = 58/_{499}a - 499B$.

Ժ. Յաղագս Եղիայի Հայոց կաթուղիկոսի ** $100/_{420}B - 421B = 58/_{499}B - 200a$.

ԺԱ. Տեառն Անանիայի Հայոց կաթուղիկոսի յաղագս ապստամբութեան տանն Աղուանից, որ ընդ ժամանակս ժամանակս լեալ իցէ ձեռնադրութիւն արաքոյ Ս. Լուսա որչի ակթոռոյն. ¹ $100/_{421}B - 450B = 58/_{200}a - 207a$.

ԺԲ. Տեառն Անանիայի Հայոց կաթուղիկոսի պաաճառ յաղագս զԽոսրով նշովելոյն զԱնձեացոց եպիսկոպոսն. ² $100/_{450}B - 451B = 58/_{207}a - 207B$.

ԺԳ. Նորին Տեառն Անանիայի Հայոց կաթուղիկոսի յաղագս, որ ասեն մի պատիւ հայրապետին և եպիսկոպոսին և վասն մի լինելոյ կողմանն. ³ $100/_{451}B - 455a = 58/_{207}B - 200a$.

ԺԴ. Նորին Տեառն Անանիայի Հայոց կաթուղիկոսի. ⁴ $100/_{455}a - 427B = 58/_{209}a - 242B$.

* Արարատ 1896 թ. Նոյեմբեր համարում Արժ. Կ. Վ. Կոմիտասի՝ Ի Պարսո, թղթին կից տպել է և այս:

** Ը. Թ. և Ժ. Էրեքն էլ Կաղանկատուացու պատմ. մէջ կան:

¹, ², ³, և ⁴. Շնորհ. Միաբանը հրատարակել է՝ հետաքրքրական յառաջաբանով Անանիա Մոկացու մասին, Արարատ 1897 թ. փետրուար, մարտ և յունիս համարներում:

ԺԵ. Խօսք հօր Յակոբայ Ծպատեցւոյ իմաստասէր զխա-
նաւորի ընդդէմ Խոսրովու իմացմանցն. $100/_{457B} - 405^a =$
 $= 58/_{242B} - 246^B$

Այստեղ վերջանում են թղթոց զբքերը, և 58 համա-
րում սկսւում են Մագիստրոսի թղթերը, իսկ 100-ում
Կիւրդի զանազան թղթեր:

Վերոյիշեալ թղթերից թողնելով արդէն մի անգամ
տպուածները, միւսները կբերենք ցածը, աւելացնելով սորա
վերայ զանազան ձեռագիրներում ցրուած անախաները:
Այսպիսով կստանանք մինչ այժմ տպուածների հետ հին
նամակների մի պատկառելի թիւ, որով և պատմութեան շատ
կէտերի վերայ լոյս սփռել հնարաւոր կլինի: Բայց որովհետեւ
զանազան ձեռագիրներում ցրուած թղթեր խիստ շատ կան,
մանաւանդ յետին դարերի զրութիւնների ուստի առ այժմ
կառնենք մօտաւորապէս մինչ ԺԴ. դար բոլոր եղածները,
բացառութեամբ մի երկուսի, որ գիտմամբ թողնում ենք
առ այժմ, որովհետեւ նորա պահանջում են աւելի երկար և
բանասիրական աշխատանք, ինչպէս օր. Գրիգոր Արծրու-
նեաց եպիսկոպոսի Երուսաղէմից գրած թուղթը, որի վաւե-
րականութիւնը կասկածի է ենթարկուած, և Աբրահամու
առ Վաչագան թուղթը,* և այլն:

ՏՊՈՒԱԾ ԳԻՐՔ ԹՂԹՈՅ.—Ի ՊԱԿԱՄՆԵՐԸ

Պատասխանի** (Աբրահամի առ Կիւրիոն Գ. քղթի)***

$$Ա. = 100/_{98a} - 99a = Բ. = 58/_{488B} - 189a.$$

Աբրահամի և Ճշմարտի Տեառն Աբրահամի Հայոց կա-
թողիկոսի ի Կիւրիոնէ Վրաց կաթողիկոսէ խոնարհութեամբ
և սիրով ողջոյն:

Ահաւասիկ այս և իմնջ երբորդ թուխտ գրեցաւ առ ձե-
րում սրբութիւնդ:**** Եւ ես զսահման հաշտութեան պինտ

* Այս թուղթը Կաղանկատուացու պատմութեան մեջ կայ,
միայն կիսատ:

** Բ օր. Պատասխանի Կիւրենայ.

*** Տպուած «Գեղք թղթոց» 185 եր.—**** Այստեղից սկսած
պակասում է.—

պահեմ, որպէս պատուիրէ սուրբ Աւետարանն, թէ լոկ ի ձենջ չլինի խռովութիւն, զի դուք այնպէս զրէք առ մեզ, որպէս առ նորատունկս և նորահաւատս, և չգրէք այնպէս, որպէս արժանն է առ պատուականս և առ միշտ ուղղափառս: Զի այսօր ողորմութեամբն Աստուծոյ և քան զամենայն երկիր յառաջադէմ եմք մեք և ուղղափառ, թող թէ քան զսակաւ ոմանս: Յառաջագոյն քան զքեզ, որ յայդ աթոռ նստէր երանելին Մովսէս՝ մեծ սէր էր ընդ իս և ընդ նա: Եւ ապա եղև ժամ մի, զի սրտի պակասութիւն եղև նորա ընդ իս, վասն զնեստորականն ընդունելոյ. այլ ոչ եթէ վասն հաւատոյ ինչ զրեաց առ մեզ, թէ չէք ուղղահաւատ, որպէս դուք իսկ զրեցէքն: Եւ իմ գնոսա ընդունին վասն այսր իրաց եղև, զի զիւրեանց զհաւատն և զկրօնն նզովեցին և զմերս խոստովանեցին: Եւ զի վասն իւրեանց չուսուցութեան զարձեալ անդրէն յիւրեանց չարութիւն* զարձան, նզովեցաք, որպէս արժան էր զանհաւատս, և ի մեր եկեղեցոյ ի բաց հանաք: Եւ արդ ձեզ չէ արժան միոյ ուրուք բանիւ խղճալ ի մեր հաւատոս, զի մինչև ցձեր հասանելոյ ժամ ի յայդ սուրբ աթոռ՝ ձեր և մեր հաւատ մի էր, և հաւատ զամենայն յՅրուսաղեմ, ունէաք և ունիմք, որպէս և զրեալն իսկ է: Բայց զինչ օգուտ իցէ մարդոյ, եթէ զամենայն պատուիրանս կատարեացէ և միով պակտս գտանիցի. ապաքէն ամենայն օրինացն յանցաւորութիւն: Մի մեծ պատուիրանաց ձեր այս է, զի Տէր մեր Յիսուս Քրիստոս ցՊետրոս ասաց, թէ զոր կապիցէք յերկրի, եղիցի կապեալ յերկինս: Արդ ահաւասիկ մեք, որ ի նոցա աթոռս նստիմք, զՄովսէսդ զայդ, որ պատճառանօք եպիսկոպոս անուանէ Յուրտաւայ, կապեցաք հաւատով՝ իմ բերանով և ամենայն եպիսկոպոսաց, և դուք ընկալայք զդա որպէս և զբարեդործ ոմն: Արդ եթէ ունիս ընդ իս սէր կամաւորութեամբ, թէպէտ աւագութեամբ, թէպէտ կրտսերութեամբ, թէպէտ վարդապետութեամբ՝ յայսմ հետէ յառաջ զոր զրէք թուխտ առ իս, թէպէտ ողջունի, թէպէտ վասն այլ ինչ պիտոյից՝ որ սիրով

* Երկու օրինակում էլ չարութեան է.

մատամբ է ընդունիմ, ըստ վասն այսր դատաստանի առ իս
աւելի ինչ մի՛ գրեց, և մի՛ աշխատ լինիր, թէ ոչ՝ պատաս-
խանի ոչ ընդունիս:

Իսկ եթէ զհաւատ մեր կամիս քննել և գիտել, ևտու
թարգմանել և բերել զգիրս չորից ժողովոցն,* որով հոռմք
վարին և սուրբ Անաստասեայ և ի սուրբ Ախոնի նոյն քա-
րողի, և թէ կամի ոք և եթէ չկամի հաւատ մեր այս է:

Առաջին Նիկիական ժողովն.

Առաջին ժողովն, որ եղև ի Նիկիա ՅձԸ սուրբ եպիս-
կոպոսաց, ի թագաւորութեան Կոստանդիանոսի մեծի, եպիս-
կոպոս էր ի Հռոմ՝ Յուլիոս, յԱղէքսանդրիա՝ Աղէքսանդ-
րոս, յԵրուսաղէմ՝ Մակարիոս: Վասն այսորիկ եղև սուրբ
ժողովն. էր ոմն յԱղէքսանդրիա քաղաքի, որ զանուն քա-
հանայութեան էր զգեցեալ և օտարացեալ ի ճշմարտու-
թենէն և ուղիղ հաւատոց, որում անունն էր Արիոս: Անօ-
րէնս այս և ողորմելի Բ-դ Յուդայ զիմեաց հայհոյել զսուրբ
և զանեղծանելի զեութիւն Ներորդութեան, ասել զՈրդոյ,
թէ չէ առաքեալն հաւասար առաքին: Վասն որոյ յարեա-
լ ի վերայ նորա սուրբ ժողով եպիսկոպոսացն և նորովցին զնա
և մեզ յայտնեցին հաւատս այսպէս. — Հաւատամք ի մի Աս-
տուած՝ Հայր ամենակալ, արարիչ երկնից և երկրի, երեւե-
լեաց ամենայնի: Եւ ի մի Տէր Յիսուս Քրիստոս՝ Որդի Աս-
տուծոյ, միայն ծնեալ ի Հօրէ, յառաջ քան զամենայն յա-
ւիտեանս. յԱստուծոյ ճշմարտէ ծնեալ և ոչ արարեալ, նման
Հօր, որով ամենայն եղև. որ վասն մարդկան կենաց էջ յերկ-
նից, մարմնացաւ և մարդացաւ և չարչարեցաւ և մեռաւ,
յարեաւ յերրորդ աւուր, և համբարձաւ յերկինս և գալոց
է դատել զկենդանիս և զմեռեալս: Եւ ի Սուրբ Հոգին: Բայց
թէ են, որ ասեն՝ էր երբեմն, զի ոչ էր, և յառաջ քան
ծնանելն չէր, և կամ թէ յոչընչէ եղև, թէպէտ յայլմէ զօ-
րութենէ, թէպէտ յեութենէ, կամ փոփոխելի ասեն զՈր-
դին Աստուծոյ՝ զնոսա նորով, կաթուղիկէ և առաքելական
եկեղեցի սուրբ:

* Երկու օրինակում էլ ժողովոյն է.

Երկրորդ Կոստանդնուպոլսի ժողովն.

Երկրորդ ժողովն եղև ի Կոստանդնուպոլիս ճԾ սուրբ Հարցն, ի Թագաւորութեան Թէոդոսի մեծի: Եպիսկոպոս էր ի Հռոմ՝ Դամասոս, յԱղէքսանդրիա՝ Տիմոթէ, յԱնտիոքայ Մելիտէ, ի Կոստանդնուպոլիս՝ Նեքտառիոս, յԵրուսաղէմ՝ Կիւրեղ: Վասն այսորիկ եղև սուրբ ժողովն. էր ոմն ի Կոստանդնուպոլիս, որում անունն էր Մակեդոն. զիմեաց և սա, որորմելիս այս և անօրէն՝ ի հայհոյել զՍուրբ և զանքննելի էութիւն Երրորդութեան և իշխեաց ասել զՀոգին Սուրբ պակաս և կրտսեր ի Հօրէ և յՈրդոյ: Եւ որպէս զառաջին մոլորեցուցին Արիոս նզովեցին սուրբ Հարքն և ընկեցին արտաքս, նոյնպէս և աստ զսա նզովեցին և ի բաց հանին ի սուրբ և յառաքելական եկեղեցոյ, և մեզ հաւատս յայտնեցին այսպէս. — Հաւատամք ի մի Աստուած՝ Հայր ամենակալ, արարիչ երկնից և երկրի, երևելեաց և աներևութից: Եւ ի մի Տէր Յիսուս Քրիստոս՝ յՈրդի յԱստուծոյ, միայն ծնեալ ի Հօրէ, յառաջ քան զամենայն յաւիտեանս. Աստուած ճշմարիտ, յԱստուծոյ ճշմարտէ ծնեալ և ոչ արարեալ, նման Հօր, որով ամենայն ինչ նովաւ եղև. որ վասն մեր մարդկան էջ յերկնից և մարմնացաւ ի Հոգոյն Սրբոյ և ի Մարիամայ կուսէն մարդացաւ. խաչեցաւ վասն մեր ի Պոնտացոյ Պիղատոսէ, Թաղեցաւ և յարեաւ յերրորդ աւուր և համբարձաւ յերկինս և նստաւ ընդ աջմէ Հօր, և զարձեալ գալոց է գատել զկենդանիս և զմեռեալս, որոյ Թագաւորութեանն վաղձան ոչ գոյ: Եւ ի Հոգին Սուրբ, որ ի Հօրէ ելանէ և ընդ Հօր և ընդ Որդոյ երկրպագի և փառաւորի, որ խօսեցաւն մարգարէիւք: Եւ ի մի կաթուղիկէ առաքելական եկեղեցի. խոստովանիմք զմի մկրտութիւն, ապաշխարութիւն ի Թողութիւն մեղաց, և մնամք յարութեան մեռելոց և կենացն յաւիտենից, ամէն:

Երրորդ Եփեսոսի ժողովն.

Երրորդ ժողովն, որ եղև յԵփեսոս սուրբ Հարցն մերոց, ի Թագաւորութեան Թէոդոսի Փոքու . . . *

* Շարունակութիւնը ամբողջ կայ 185 եր.